Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հուլիսի 12-ի N 846 - Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՌՈՏԱՑԻԱՅԻ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն) ռոտացիայի ենթակա փրկարարական ծառայողների ցանկը և ռոտացիայի իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Ռոտացիայի ենթակա են նախարարության՝

1) աշխատակազմի փրկարար ծառայության՝

ա. կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող վարչությունների պետերը և նրանց տեղակալները,

բ. կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող վարչությունների ստորաբաժանումների պետերը, ավագ հրահանգիչները և հրահանգիչները,

գ. մարզային (Երևան քաղաքի) փրկարարական վարչությունների պետերը և նրանց տեղակալները,

դ. մարզային (Երևան քաղաքի) փրկարարական վարչությունների կառուցվածքային միավորների պետերը, այդ միավորների ավագ հրահանգիչները և հրահանգիչները,

ե. հատուկ փրկարարական, հրշեջ, հատուկ ջրափրկարարական ջոկատների հրամանատարները և նրանց տեղակալները,

զ. հրշեջ-փրկարարական ջոկատների հրամանատարները և նրանց տեղակալները,

է. «911» ծառայության (այդ թվում՝ մարզային) պետը և ծառայողները,

ը. ջոկատների խմբերի պետերը և այդ պաշտոններին հավասարեցված պաշտոններ զբաղեցնող անձինք.

2) ներկայացուցիչները՝ օտարերկրյա պետություններում, միջազգային կազմակերպություններում, Հայաստանի Հանրապետության այլ պետական մարմիններում.

3) «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում և այլ պետական ոչ առևտրային կազմակերպություններում փրկարարական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք:

3. Փրկարարական ծառայողների ռոտացիան կատարվում է առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ:

4. Փրկարարական ծառայողի ռոտացիան իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով:

5. Նախարարին փրկարարական ծառայողների ռոտացիայի ցուցակը ներկայացնում է նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության կադրային մարմինը:

6. Նախարարը ծառայողների ռոտացիա իրականացնելու մասին որոշումն ընդունում է ռոտացիա իրականացնելուց առնվազն երկու շաբաթ առաջ:

7. Փրկարարական ծառայողի ռոտացիայի դեպքում ծառայողը նշանակվում է իր զբաղեցրած պաշտոնին հավասարազոր պաշտոնից ոչ ցածր պաշտոնի:

8. Կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պատճառաբանված հիմնավորմամբ՝ նախարարը կարող է չիրականացնել փրկարարական ծառայողների ռոտացիա և այդ ծառայողի ռոտացիային անդրադառնալ հաջորդ փուլում՝ եռամյա ժամկետը լրանալուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ